**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-10/6-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** 13 **.03.2020թ**.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **26.12.2019թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-10/6-2** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **15,772,800 (տասնհինգ միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար ութ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարման ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան **10.12.2020թ.**:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ք. Երևան, Օրբելի 33 Ա, բն.15 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Արմ Սվիս Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011024537 | Հ/Հ 2500010332900100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 08209436 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՉՅԱՆ | Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/6-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 1. | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Կտրող սարք (բալգարկա)) | հատ | 50 | 26,160 | 1,308,000 | 50 |
| 2. | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Էլ. շաղափ (դրել)) | հատ | 40 | 12,750 | 510,000 | 40 |
| 8. | Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 40 Կվտ) | հատ | 1 | 2,898,000 | 2,898,000 | 1 |
| 9. | Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 60Կվտ) | հատ | 1 | 3,480,000 | 3,480,000 | 1 |
| 10 | Դիզել գեներատոր (Էլեկտրական գեներատոր 96-110Կվտ) | հատ | 1 | 4,296,000 | 4,296,000 | 1 |
| 16. | Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ K80-65-160, 3K9) | հատ | 5 | 219,600 | 1,098,000 | 5 |
| 19. | Ջրի պոմպեր (ԷՑՎ-4) | հատ | 1 | 296,400 | 296,400 | 1 |
| 20. | Ջրի պոմպեր (ԷՑՎ-6) | հատ | 2 | 297,000 | 594,000 | 2 |
| 21. | Ջրի պոմպեր (ԷՑՎ-8) | հատ | 3 | 430,800 | 1,292,400 | 3 |

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՑՈԼՅԱՆ

**Վաճառող**
«ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ
տնօրեն

Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/6-2 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 1 | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Կտրող սարք (բալգարկա)) | 42651200/507 | 1,308,000 | 1,308,000 | 1,308,000 | 1,308,000 | 1,308,000 | 1,308,000 | 1,308,000 | 1,308,000 | 1,308,000 | 1,308,000 |
| 2 | Ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքներ (Էլ. շաղափ (դռել)) | 42651200/508 | 510,000 | 510,000 | 510,000 | 510,000 | 510,000 | 510,000 | 510,000 | 510,000 | 510,000 | 510,000 |
| 8. | Դիզել գեներատոր (էլեկտրական գեներատոր 40 Կվտ) | 42981200/507 | 2,898,000 | 2,898,000 | 2,898,000 | 2,898,000 | 2,898,000 | 2,898,000 | 2,898,000 | 2,898,000 | 2,898,000 | 2,898,000 |
| 9. | Դիզել գեներատոր (էլեկտրական գեներատոր 60Կվտ) | 42981200/508 | 3,480,000 | 3,480,000 | 3,480,000 | 3,480,000 | 3,480,000 | 3,480,000 | 3,480,000 | 3,480,000 | 3,480,000 | 3,480,000 |
| 10. | Դիզել գեներատոր (էլեկտրական գեներատոր 96-110Կվտ) | 42981200/509 | 4,296,000 | 4,296,000 | 4,296,000 | 4,296,000 | 4,296,000 | 4,296,000 | 4,296,000 | 4,296,000 | 4,296,000 | 4,296,000 |
| 16. | Կենտրոնախույս պոմպեր (Կենտրոնախույս պոմպ K80-65-160, 3K9) | 42121350/511 | 1,098,000 | 1,098,000 | 1,098,000 | 1,098,000 | 1,098,000 | 1,098,000 | 1,098,000 | 1,098,000 | 1,098,000 | 1,098,000 |
| 19. | Ջրի պոմպեր (ԷՑՎ-4) | 42121190/502 | 296,400 | 296,400 | 296,400 | 296,400 | 296,400 | 296,400 | 296,400 | 296,400 | 296,400 | 296,400 |
| 20. | Ջրի պոմպեր (ԷՑՎ-6) | 42121190/503 | 594,000 | 594,000 | 594,000 | 594,000 | 594,000 | 594,000 | 594,000 | 594,000 | 594,000 | 594,000 |
| 21. | Ջրի պոմպեր (ԷՑՎ-8) | 42121190/504 | 1,292,400 | 1,292,400 | 1,292,400 | 1,292,400 | 1,292,400 | 1,292,400 | 1,292,400 | 1,292,400 | 1,292,400 | 1,292,400 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Գնորդ**
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

**Վաճառող**
«ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ
տնօրեն

Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ